ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 մայիսի 2016թ. թիվ 156-Ա

«ՎԱՆԱՁՈՐԻ ԹԻՎ 4 ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» ՊԵՏԱԿԱՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՏԵՂԱԲԱՇԽՎԱԾ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ ՓՈԽԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ, «ՎԱՆԱՁՈՐԻ ԹԻՎ 1 ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» ՊԵՏԱԿԱՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻ ՉԱՓԸ ԵՎ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին կետի և 20-րդ հոդվածի՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ.

1. Հաստատել «ՎԱՆԱՁՈՐԻ ԹԻՎ 4 ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» պետական փակ բաժնետիրական ընկերության կողմից տեղաբաշխված հասարակ անվանական բաժնետոմսերի փոխարկման արդյունքները «ՎԱՆԱՁՈՐԻ ԹԻՎ 1 ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» պետական փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերի, այն է՝

«ՎԱՆԱՁՈՐԻ ԹԻՎ 4 ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» պետական փակ բաժնետիրական ընկերության կողմից տեղաբաշխված թվով 3,413 հատ 10,000 դրամ անվանական արժեքով հասարակ (սովորական) անվանական ոչ փաստաթղթային բաժնետոմսերը փոխարկվում են «ՎԱՆԱՁՈՐԻ ԹԻՎ 1 ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» պետական փակ բաժնետիրական ընկերության կողմից թողարկված թվով 2,351 հատ 10,000 դրամ անվանական արժեքով հասարակ անվանական բաժնետոմսերի:

2. Հաստատել միացման ճանապարհով վերակազմակերպված (ընդլայնված) «ՎԱՆԱՁՈՐԻ ԹԻՎ 1 ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» պետական փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալի մեծությունը՝ 40,910,000 (քառասուն միլիոն ինը հարյուր տասը հազար) դրամ՝ 10,000 դրամ անվանական արժեքով 4,091 հատ հասարակ (սովորական) անվանական բաժնետոմս:

3. Հաստատել «ՎԱՆԱՁՈՐԻ ԹԻՎ 1 ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» պետական փակ բաժնետիրական ընկերության՝ վերակազմակերպմամբ պայմանավորված կանոնադրության փոփոխությունը:

4. Հանձնարարել «ՎԱՆԱՁՈՐԻ ԹԻՎ 1 ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» պետական փակ բաժնետիրական ընկերության տնօրենին՝

- սույն որոշումն այլ անհրաժեշտ փաստաթղթերի հետ միասին ներկայացնել Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական ռեգիստր՝ ընկերության վերակազմակերպմամբ պայմանավորված փոփոխությունը և ընկերության կանոնադրության փոփոխությունը գրանցելու համար,

- դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմ՝ ընկերության անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման վկայականի վերաձևակերպման խնդրանքով,

- դիմել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն՝ ընկերության լիցենզիաների վերաձևակերպման խնդրանքով,

- կատարել կազմակերպչական աշխատանքներ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի որոշմամբ հաստատված փոխանցման ակտի համաձայն հանձնում-ընդունումն իրականացնելու, աշխատակիցների վերաձևակերպման, ինչպես նաև սույն որոշումից բխող այլ աշխատանքների ուղղությամբ:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2016թ. մայիսի 25
ք.Վանաձոր